փակւում գնման գաղափարի մարմնացումն, յանձնւում է միմիայն աղջկայ հօրը՝ համայնական ընտանիքի պատասխանատու տիրոջը, համայնական սեփականութեան իրաւաբանական ներկայացուցչին։

Ժամանակի ընթացքում սոցիալ-տնտեսական պայմանների ազդեցութեան տակ նահապետական գերդաստանն իւր համայնական գաղափարով սկսում է տարրալուծուել ու վերածուել անհատական ընտանիքի, ուր ընտանեկան իրաւունքի վերաբերմամբ անշուշտ գերիշխում են այլ հայեացքներ։ Այստեղ արդէն ընտանիքի կազմի թէ բարոյական և թէ տնտեսական հիմքը կազմում է անհատական գաղափարը. մի գաղափար, որ արդի ընտանիքի բաղկացուցիչ անդամներին թէ ներքին և թէ արտաքին հասարակական փոխադարձ յարաբերութիւնների մէջ տալիս է այնպիսի անկախութիւն, որ միմիայն մեր ժամանակակից սոցիալ-տնտեսական սկզբունքների անհատականութեանն են յատուկ։ Ահա այսպիսի պայմաններում, ակներև է, որ հօր իրաւունքն ընտանիքի անդամների ընչքի ու սեփականութեան, որպէս և նոցա անձնական ինքնուրոյնութեան վրայ, որոշ ու զգալի չափով սահմանափակւում է։

Ընտանիքի հայրն այլ ևս անկարող է լինում իւր աղջկայ համար տրուած գնման վճարի վրայ այն իրաւունքը բանեցնել, ինչ որ յատուկ է նահապետական համայնական ընտանիքի գաղափարի տիրապետութեանը։ Ո՛չ թէ հայրը, այլ աղջիկն է այժմ հանդիսանում տէր այդ վճարուած գումարի, որն իւր անձի, իւր գլխի վաճառումից է ստացուել։ Շնորհիւ այդ անհատական գաղափարին, աղջիկն ամուսնանալիս ամենայն իրաւամբ այն գումարը, որ վճարել են նրա հօրը իւր անձի համար, տանում է իբրև իւր անձնական սեփականութիւն իրեն հետ ամուսնու տունը։ Ահա այստեղից ծագում է *օժիտի* կամ *բաժինքի* գաղափարը, որ յայտնի էր տակաւին հին հռոմէական իրաւունքի մէջ dos անունով, և որ կազմում էր կնոջ սեփականութիւնը—peculium։ Բաժինքի մասին յիշատակում է նաև

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան